ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 սեպտեմբերի 2016 թվականի N 921 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ը» ենթակետը և 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի 8
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 8-ի N 921 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման հետ կապված հարաբերությունները:

2. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» և «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հասկացությունները սույն կարգում կիրառվում են նույն իմաստով:

3. Ռազմարդյունաբերական համալիրի սուբյեկտների կառավարման ավտոմատացված համակարգի մաս հանդիսացող Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ միասնական տեղեկատվական համակարգ) կազմված է բաժիններից, որոնք ձևավորում ու վարում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերության պետական կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե):

4. Միասնական տեղեկատվական համակարգում գրանցումը կոմիտեի կողմից իրականացվում է թղթային (քարտային) և էլեկտրոնային տարբերակներով: Եթե քարտային գրառումները չեն համապատասխանում էլեկտրոնային կրիչներում առկա գրառումներին, ապա կիրառվում է քարտային տեղեկատվությունը:

5. Միասնական տեղեկատվական համակարգում գաղտնի փաստաթղթերի մշակման, պահպանման, ճշգրտման և վարման հետ կապված աշխատանքներն իրականացվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքերումներ են համարվում հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքների արդյունքները:

7. Միասնական տեղեկատվական համակարգը հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքների արդյունքների մասին տեղեկատվական ամբողջություն է՝ համաձայն ձևի:

8. Միասնական տեղեկատվական համակարգում հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքների արդյունքների մասին տեղեկատվության մուտքագրումը կատարվում է էլեկտրոնային կենտրոնային սերվերում և թղթային տարբերակով:

9. Հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքների արդյունքները կոմիտեին են հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

10. Միասնական տեղեկատվական համակարգում մուտքագրումները կատարվում են հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքների արդյունքները հանձնման-ընդունման ակտով ներկայացվելուց հետո 5-օրյա ժամկետում:

11. Էլեկտրոնային կենտրոնական սերվերից օգտվելու հնարավորություն ունեն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի վարչությունները և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության լոկալ ցանցի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Հատուկ գիտական և գիտաարտադրական աշխատանքի անվանումը կամ պայմանագրի համարը	ՌԱՀ-ի կազմակերպության անվանումը	Աշխատանքի նշանակությունը և նպատակը	Արդյունքը (արդյունքները)